Միավորված Ազգերի Կազմակերպություն A/77/801-S/2023/134

Գլխավոր ասամբլեա
Անվտանգության խորհուրդ

Բաշխ.՝ Ընդհանուր
14 Մարտ, 2023
Օրիգինալ՝ Անգլերեն

Յոթանասունյոթերորդ նստաշրջան
Յոթանասունութերորդ տարի
Օրակարգի կետերը՝ 30, 57, 58, 66, 68, 73, 78, 84 և 132

Զինված ընդհարումների կանխարգելում
Միավորված Ազգերի Կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի զեկույցը, փախստականներին, վերադարձող անձանց ու տեղահանված անձանց վերաբերող հարցեր, ինչպես նաև հումանիտար հարցեր
Խաղաղաշինություն ու խաղաղության պահպանում
Ռասիզմի, ռասայական խտրականության, քսենոֆոբիայի ու դրանց հետ կապված անհանդուրժողականության վերացում
Մարդու իրավունքների խրախուսում ու պաշտպանություն
Պետությունների պատասխանատվությունը միջազգային-իրավախախտ արարքների համար
Մարդկության դեմ հանցագործություններ
Իրավունքի գերակայությունը ազգային և միջազգային մակարդակներում
Պատասխանատվություն՝ պաշտպանելու ու կանխելու ցեղասպանությունը, պատերազմական հանցագործությունները, էթնիկ զտումներն ու մարդկության դեմ ուղղված հանցագործությունները

Միավորված ազգերի կազմակերպությունում Ադրբեջանի մշտական ներկայացուցչի 2023 թվականի փետրվարի 22-ի նամակը՝ ուղղված Գլխավոր քարտուղարին

Ի լրումն 2023 թվականի հունվարի 17-ի իմ նամակի, որի հավելվածում ներկայացված էր Արևմտյան Ադրբեջանի համայնքի դիմումը (A/77/706-S/2023/43), պատիվ ունեմ հրավիրել ուշադրությունը ներկայիս Հայաստանի տարածքից վտարված ադրբեջանցիների խաղաղ, անվտանգ ու արժանապատիվ վերադարձի ապահովման Հայեցակարգին, որն ընդունվել է Համայնքի կողմից (տես հավելվածը):

Սույն Հայեցակարգը սահմանում է Արևմտյան Ադրբեջանի համայնքի կողմից իրականացվող գործունեության ընդհանուր շրջանակը՝ նպատակ հետապնդելով ապահովել ներկայիս Հայաստանի տարածքից բռնի տեղահանված ադրբեջանցիների անվտանգ ու արժանապատիվ վերադարձը:

Երախտապարտ կլինեմ սույն նամակը և դրա հավելվածը որպես Գլխավոր ասամբլեայի փաստաթուղթ՝ օրակարգի 30, 57, 58, 66, 68, 73, 78, 84 և 132 կետերի ներքո, ինչպես նաև Անվտանգության խորհրդի փաստաթուղթ տարածելու համար:

(Ստորագրություն) Ցաշար Ալիև
Դեսպան
Մշտական ներկայացուցիչ

23-04674 (E) 270323

Please recycle

Հավելված Միավորված Ազգերի Կազմակերպությունում Ադրբեջանի մշտական ներկայացուցչի 2023 թվականի փետրվարի 22-ի նամակին՝ ուղղված Գլխավոր քարտուղարին

Ներկայիս Հայաստանի տարածքից վտարված ադրբեջանցիների խաղաղ, անվտանգ ու արժանապատիվ վերադարձի ապահովման հայեցակարգ

ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

1. Ներածություն

Կազմակերպությունը, որը հիմնադրվել է 1989 թվականին որպես «Փախստականների Ադրբեջանական ընկերություն» և 2022 թվականին ստացել է «Արևմտյան Ադրբեջանի Համայնք» անվանումը (Համայնք), զբաղվում է ներկայիս Հայաստանի տարածքից վտարված ադրբեջանցիների իրավունքների պաշտպանությամբ: Սույն Հայեցակարգը սահմանում է այն նպատակների, սկզբունքների, նախապատրաստական ու գործադիր տարրերի ընդհանուր շրջանակը, որոնք իրականացվելու են Համայնքի կողմից՝ ներկայիս Հայաստանի տարածքից բռնի տեղահանված ադրբեջանցիների վերադարձի համար: Հայեցակարգը հիմնված է միջազգային իրավունքի, համապատասխան ազգային օրենսդրության, պատմական փաստերի վրա և ծառայում է արդարության ու խաղաղության հաստատմանը:

2. Խնդրի նկարագրությունը

Վերջին երկու դարերի ընթացքում ադրբեջանական ժողովուրդը մեծապես տուժել է զինված հակամարտություններից, օկուպացիայից, էթնիկ զտումներից, բռնի տեղահանումներից և ցեղասպանությունից: Ադրբեջանցիների լիակատար վտարումը ներկայիս Հայաստանի տարածքից, որտեղ նրանք ժամանակին կազմում էին բացարձակ մեծամասնություն, ավարտվեց 1991 թվականին: Էթնիկ զտումների հետևանքով այդ տարածքում այժմ բնակվում են բացառապես հայեր: Ադրբեջանցիների դեմ իրականացված էթնիկ զտումները մեծամասամբ պետական մարմինների համակարգված գործունեության արդյունք էին և իրականացվել են բռնության, ցեղասպանության, զանգվածային սպանությունների ու մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունների, ինչպես նաև մարդու իրավունքների կոպիտ խախտումների միջոցով: Այս գործընթացը հատկապես ծանր ու անգութ է եղել 1905-06, 1918-21, 1948-53 և 1987-91 թվականներին: Այս գործողությունների հետևանքները, այդ թվում՝ 1918–21 թվականներին «Հայաստանի Հանրապետություն», «Լեռնահայաստանի Հանրապետություն» կոչվող կազմավորումների, Խորհրդային Միության, հատկապես ԽՍՀՄ տիրահռչակ ղեկավար Իոսիֆ Ստալինի գործողությունների արդյունքները, ով 1921 թվականին Հայաստանին է հանձնել Զանգեզուրն ու այլ շրջաններ, որտեղ գերակշռող բնակչությունը ադրբեջանցիներ էին, և ստորագրել է Հայաստանից հարյուր հազար ադրբեջանցիների տեղահանման մասին ռասիստական որոշումը, ինչպես նաև 1987–91 թվականներին Հայկական ԽՍՀ-ի կողմից իր ադրբեջանական բնակչության դեմ իրականացված արարքները, իրենց դեռևս զգացնել են տալիս:

Հայաստան կոչվող տարածքում համատարած ոչնչացվել է ադրբեջանցիներին պատկանող պատմական ու մշակութային ժառանգությունը, ներառյալ մզկիթներն ու գերեզմանատները, փոխվել են աշխարհագրական անվանումները, ադրբեջանցիների նկատմամբ իրականացվել է համակարգված բնույթի ռասայական խտրականություն: Ադրբեջանցիների դեմ էթնիկ զտումներին ու այլ հանցագործություններին մասնակցած անձինք ու նրանց գործողությունները Հայաստանում փառաբանվում են պետական մակարդակով:

Այս աննախադեպ անարդարությունը անպատժելիության զգացում է առաջացրել Հայաստանի իշխող շրջանակներում ու դրդել նրանց տարածքային հավակնություններ ներկայացնել Ադրբեջանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված տարածքների նկատմամբ, կիրառել ուժ, իրականացնել ռազմական օկուպացիա, զանգվածային մասշտաբների նոր էթնիկ զտումներ և մարդկության դեմ ուղղված այլ հանցագործություններ: 2020 թվականին Հայաստանի զինված հարձակման ու ռազմական օկուպացիայի դեմ Ադրբեջանի Հանրապետության ինքնապաշտպանական գործողության հաղթական ավարտը կարևոր քայլ դարձավ արդարության վերականգնման ճանապարհին ու մեծացրեց երկու երկրների միջև խաղաղության հաստատման հնարավորությունները: Մյուս կողմից, ներկայիս Հայաստանի տարածքներից վտարված ադրբեջանցիների վերադարձի անհնարինությունը, Հայաստանում միաէթնիկ պետականության, էթնիկ զտումների ու համակարգված ռասայական խտրականության քաղաքականության շարունակությունը մեծ անարդարություն են և լուրջ սպառնալիք են ստեղծում տևական խաղաղության հաստատման համար:

3. Նպատակները, խնդիրներն ու մոտեցումը

Համայնքը չի ընդունում վերջին երկու դարերի ընթացքում արևմտյան ադրբեջանցիների նկատմամբ իրականացված անարդարությունն ու մերժում է այդ անարդարության հետևանքները: Հիմնվելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայում ու միջազգային այլ կարևոր ակտերում ամրագրված վերադարձի իրավունքի վրա՝ Համայնքն իր գլխավոր նպատակն է հայտարարում ներկայիս Հայաստանի տարածքից վտարված ադրբեջանցիների՝ իրենց հայրենի օջախներ վերադառնալու համար պայմանների ստեղծումն ու այնտեղ վերադառնալուց հետո նրանց անհատական ու հավաքական իրավունքների ապահովումը: Սույն Հայեցակարգով իրականացվող գործունեության հիմնական նպատակներն ու սկզբունքներն են.

– ներկայիս Հայաստանի տարածքից վտարված ադրբեջանցիների՝ իրենց հայրենի օջախներ կամավոր, անվտանգ ու արժանապատիվ վերադարձի համար իրավաբանորեն պարտավորեցնող միջազգային համաձայնագրի ձեռքբերում՝ համապատասխան վերիֆիկացիոն մեխանիզմով ու երաշխիքներով;

– վերադարձի գործընթացի ապահովում անվտանգության, հումանիտար ու սոցիալ-տնտեսական օգնության համապատասխան ծրագրերով;

– միջազգային մոնիթորինգի, հաշվետվողականության, անվտանգության, միջամտության ու այլ անհրաժեշտ միջոցառումների հաստատում՝ վերադարձած բնակչության նկատմամբ կրկնակի վտարումը, որևէ խտրականությունն ու վնաս պատճառելը կանխելու նպատակով;

– վերադարձած անձանց կայուն վերականգնման ու ռեինտեգրման ապահովում՝ միջազգային վերահսկողության ներքո վերականգնման ու հաշտեցման միջոցառումների իրականացման միջոցով:

Որպես արևմտյան ադրբեջանցիների օրինական ներկայացուցիչ տասնամյակների ընթացքում՝ Համայնքը ակտիվ դերակատարություն կունենա վերադարձի գործընթացում. որպես շահագրգիռ կողմ ջանքեր կգործադրի համապատասխան պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ երկխոսություն վարելու ու համագործակցելու, ինչպես նաև նրանց կողմից որպես լեգիտիմ վիզավի ճանաչվելու համար: Արևմտյան ադրբեջանցիների հատուկ կապերն Ադրբեջանի Հանրապետության հետ, որը երկար ժամանակ հոգ է տարել նրանց մասին, պետք է հաշվի առնվեն, ու հայրենի օջախներ վերադառնալուց հետո պետք է հնարավորություն ստեղծվի Ադրբեջանի Հանրապետության հետ նրանց անխոչընդոտ կապի համար:

Վերադարձի գործընթացը պետք է վերականգնի արևմտյան ադրբեջանցիների բնակեցման կոնֆիգուրացիան, որը գոյություն ուներ մինչև էթնիկ զտումները: Ադրբեջանցիներին տարբեր պատրվակներով ու իրավաբանական հնարքներով ցրված բնակեցնելու փորձերը կմերժվեն որպես ռասիզմի ձև ու որպես ռեինտեգրմանը խոչընդոտող վնասակար մոտեցում: Այս սկզբունքից շեղում կարող է տեղի ունենալ միայն համապատասխան անձանց ազատ կամարտահայտության ու համաձայնության հիման վրա:

Վտարված անձի՝ վերադառնալու որոշումը պետք է լինի կամավոր, ու այդ որոշումը կայացնելու համար նրան պետք է տրամադրվի լիարժեք տեղեկատվություն իրավունքների և ուժինարավորությունների վերաբերյալ: Պետք է հաշվի առնվի, որ իրավասու անձը կարող է վերադարձի որոշում կայացնել միայն այն բանից հետո, երբ համոզվի տուն վերադառնալու անվտանգ ու արժանապատիվ հնարավորության մեջ՝ ներառյալ համարժեք երաշխիքների տրամադրումն ու վերադարձի ընթացքում և դրանից հետո իր կյանքը կառուցելու համար բավարար ռեսուրսների հատկացումը, և որ իր անհատական ու հավաքական իրավունքները երաշխավորված կլինեն իր պատմական հայրենիքում:

Վերադարձի գործընթացում կանանց, երեխաների ու բնակչության սոցիալապես խոցելի խմբերին պատկանող անձանց շահերը հաշվի կառնվեն որպես հիմնական առաջնահերթություն, այս ոլորտում միջազգայնորեն ճանաչված առաջադեմ հայեցակարգերը և ստանդարտները, ներառյալ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» մոտեցումը, առաջնային տեղ կզբաղեցնեն վերադարձի գործընթացում:

Համայնքը գիտակցում է, որ վերջին երկու դարերի ընթացքում հայ ու ադրբեջանական ժողովուրդների միջև գոյություն ունի խորը պառակտում, և որ Հայաստանի՝ միջազգային իրավունքին հակասող գործողությունների հետևանքով զգալի թվով մարդիկ ներկայումս տառապում են անվտանգության խնդիրներից: Համայնքը համարում է, որ առաջացած բոլոր քաղաքական, իրավական, սոցիալական, հումանիտար ու անվտանգային խնդիրների պատասխանատվությունը կրում է Հայաստանը: Համայնքը, ճանաչելով հումանիտար հրատապությունը որպես անվտանգության խնդիրների խաղաղ կարգավորման օբյեկտիվ չափանիշ՝ կարծում է, որ կայուն խաղաղության հաստատման գործընթացում այն ժամանակահատվածը, որի ընթացքում անարդարությունն ու իրավախախտումները մնում են չդիտարկված, միջազգային ուշադրության արժանանալու հիմնական չափանիշ է հանդիսանում: Այսպիսով, որքան երկար են մնում չլուծված իրավախախտումներն ու անարդարությունը, այնքան ուժեղանում է անպատժելիության զգացումն ու այնքան ավելի շատ անարդարություն է ծնվում: Դա իր հերթին խրախուսում է fait accompli և այնպիսի անմարդկային, վնասակար ու վտանգավոր մարտավարություն, ինչպիսին է մի անարդարության մոռացության մատնումը՝ մեկ այլ՝ ավելի մեծ անարդարություն գործելու միջոցով: Այս կապակցությամբ Համայնքը կարծում է, որ մեծ անարդարության ենթարկված արևմտյան ադրբեջանցիների իրավունքների վերականգնման հարցը գտնվում է այն առաջնահերթ հարցերի շարքում, որոնք պետք է դիտարկվեն տարածաշրջանային անվտանգության և Հայաստանի ու Ադրբեջանի միջև հարաբերությունների վերականգնման համատեքստում:

4.1. Միջազգային-իրավական հիմքերն ու երաշխիքները

Առաջնահերթ խնդիրն է միջազգային հանրության օրակարգ բերել ժամանակակից Հայաստանի տարածքից ադրբեջանցիների վտարումը՝ որպես աննախադեպ անարդարություն: Համայնքը կձգտի հասնել այս իրավիճակի շարունակումն իբրև միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնալիք ճանաչելուն, ինչպես նաև կձգտի հասնել իրավաբանորեն պարտադիր որոշումների ու համաձայնագրերի՝ վերիֆիկացիայի և երաշխիքների համապատասխան մեխանիզմով, որոնք կապահովեն ադրբեջանցիների վերադարձի իրավունքը՝ դրանով իսկ հաստատելով տևական խաղաղություն և արդարություն: Այդ նպատակով Համայնքը ջանքեր կգործադրի, որպեսզի Արևմտյան Ադրբեջանից վտարված ադրբեջանցիների վերադարձի համար պայմանների ստեղծումը արտացոլվի որպես Հայաստանի պարտավորություն Ադրբեջանի ու Հայաստանի միջև խաղաղության պայմանագրում:

Համայնքը կապեր կհաստատի Ադրբեջանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության կառավարության, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամների, տարածաշրջանի երկրների ու այլ համապատասխան պետությունների ու կազմակերպությունների հետ՝ վերադարձի միջազգային-իրավական շրջանակը ձևավորելու համար:

4.2. Համայնքի անդամների նույնականացումն ու մարդահամարը

Ժամանակակից Հայաստանի տարածքից վտարված բոլոր ադրբեջանցիներն ու նրանց սերունդները հայրենիք վերադառնալու իրավունք ունեն: Համայնքը կիրականացնի անդամների մարդահամար՝ Ադրբեջանի Հանրապետության ու այլ երկրների բնակչության գրանցման ծառայությունների օգնությամբ՝ համապատասխան միջազգային մեթոդաբանության հիման վրա: Հաշվի առնելով, որ համապատասխան անձանց ինքնաներկայացումը սույն մարդահամարի արդյունավետ գործիքներից մեկն է՝ նրանց այդ քայլին դրդելու նպատակով կիրականացվի լայնածավալ տեղեկատվական արշավ առ այն, որ հայրենիքից վտարումը իրավունքի կոպիտ խախտում է, լայն հասարակությանը կպարզաբանվի անվտանգ ու արժանապատիվ վերադարձի մոտեցման էությունը:

4.3. Վերադարձի պլանի պատրաստումը

Համայնքը ջանքեր կգործադրի՝ գտնելու համապատասխան միջազգային գործընկեր-իրականացնող՝ վերադարձի գործընթացի կանոնակարգված ու արդյունավետ իրականացման համար: Նախապատվությունը կտրվի նրան, որ այդ գործընկերը դառնա Միավորված Ազգերի Կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը: Համայնքը, միջազգային գործընկեր-իրականացնողի հետ միասին, կմշակի վերադարձի մանրամասն պլան՝ հիմնված կիրառելի միջազգային չափանիշների վրա՝ Ադրբեջանի կառավարության և Հայաստանի կառավարության հետ շփման միջոցով: Վերադարձի պլանը պետք է նկարագրի գործընթացի փուլերն ու ուղղությունները՝ նշելով անհրաժեշտ քայլերը, ռեսուրսներն, ինչպես նաև հստակ ժամկետները:

4.4. Հայաստանի իրավական բազային նկատմամբ վերաբերմունքը

Արևմտյան ադրբեջանցիները, ովքեր բռնի ուժով արտաքսվել են «Հայաստանի Հանրապետություն» կոչվող քաղաքական-իրավական միավորի կողմից արդյունավետորեն վերահսկվող տարածքից, զրկված են եղել այդ պետության կայացմանը, նրա սահմանադրական հիմքերի ու ազգային-իրավական նկարագրի ձևավորմանը մասնակցելու հնարավորությունից:

Համայնքը գիտակցում է, որ Հայաստանի Հանրապետությունը Միավորված Ազգերի Կազմակերպության անդամ է, ճանաչված է պետությունների մեծամասնության կողմից և Հայաստանի Հանրապետությունը դիտարկում է որպես քաղաքական-իրավական իրողություն: Հայաստանի միացումը համապատասխան միջազգային-իրավական փաստաթղթերին, այդ թվում՝ Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրությանը, այդ երկրի վրա դնում է կոնկրետ պարտավորություններ՝ իր տարածքից արտաքսված ադրբեջանցիների իրավունքների վերականգնման ու պաշտպանության ոլորտում, ներառյալ նրանց՝ սեփական տներ անվտանգ ու արժանապատիվ վերադարձի համար պայմանների ստեղծումը: Համայնքն արևմտյան ադրբեջանցիների հնարավոր գործունեությունը Հայաստանի իրավական համակարգի շրջանակներում՝ անհատական և հավաքական կարգով, դիտարկում է որպես գործնական հարց ու մերժում է դրա մեկնաբանությունն ու ձևակերպումը որպես երկրի տարածքում ադրբեջանցիների նկատմամբ կատարված ցանկացած անարդարության և ապօրինի գործողությունների ընդունում, ինչպես նաև նրանց օրինական շահերից հրաժարում: Հայաստանի Հանրապետությունը պետք է իր ազգային իրավական դաշտը հասանելի դարձնի ադրբեջանական համայնքի համար, ապահովի ադրբեջանցիների հավասար իրավունքները, հնարավորություն տա նրանց սովորել մայրենի լեզվով, օգտագործել ադրբեջաներենն օրենսդիր, գործադիր ու դատական մարմիններում, իսկ ադրբեջանցիների իրավունքների պաշտպանության լիարժեք ապահովման նպատակով՝ իր օրենսդրության կատարելագործման համար պետք է կառուցողական երկխոսություն սկսի Համայնքի հետ՝ համապատասխան միջազգային ինստիտուտների իրավական խորհրդատվական, մոնիթորինգային և վերահսկողական մեխանիզմների շրջանակներում Ցանկացած պարագայում, Արևմտյան Ադրբեջանից արտաքսված ադրբեջանցիներն իրավունք ունեն ապրել իրենց հայրենիքում. այդ իրավունքը հավերժական է, անձեռնմխելի, բացարձակ և վճռորոշ գործոն: Հայաստանի կողմից անձը հաստատող, գույքային ու այլ իրավունքների վերաբերյալ փաստաթղթերի տրամադրումը չի ստեղծում այդ իրավունքը, իսկ դրանց չտրամադրումը չի զրկում այդ իրավունքից: Նման փաստաթղթերի տրամադրումը միայն ձևական-տեխնիկական հարց է, ու դա մի պարտավորություն է, որը Հայաստանի Հանրապետությունը, որը ներկայումս վերահսկում է նշված տարածքները, պետք է անվերապահորեն կատարի:

4.5. Անվտանգության ապահովումը

Հայաստանի կառավարության կողմից ադրբեջանցիների նկատմամբ իրականացված լայնածավալ ու համակարգված բռնությունների պատճառով Համայնքը չի վստահում այդ պետությանը անվտանգության հարցերում ու կարևոր է համարում արևմտյան ադրբեջանցիների վերադարձի ենթակա տարածքներում համապատասխան մանդատով օժտված միջազգային անվտանգության առաքելության տեղակայումը, որը կազմված կլինի այն երկրների ուժերից, որոնց նրանք վստահում են:

Միջազգային առաքելության մանդատն ու կարողությունները կախված կլինեն անվտանգային իրավիճակից: Հաշվի առնելով այն փաստը, որ սպառնալիքների գնահատումը պահանջում է տեղեկատվության հավաքագրման ու վերլուծության համապատասխան կարողություններ, իսկ այդ հնարավորությունները Համայնքում բացակայում են, Համայնքն ակնկալում է Ադրբեջանի Հանրապետության կառավարության օգնությունն այս հարցում: Համայնքը որպես հիմք կընդունի սպառնալիքների այն գնահատումը, որը կկարողանա տրամադրել Ադրբեջանի կառավարությունը տվյալ հարցի վերաբերյալ: Միջազգային առաքելությունը պետք է տեղակայվի մինչև վերադարձը, վերահսկողության տակ վերցնի համապատասխան շրջանները, ունենա քաղաքացիական-ռազմական կապեր, ոստիկանության ու քաղաքացիական վարչակազմի լիազորություններ և գործի այնքան ժամանակ, քանի դեռ Համայնքը դա անհրաժեշտ կհամարի:

Անվտանգության ապահովման միջազգային առաքելության մանդատի ձևակերպման և կառավարման ձևաչափի հարցերում Համայնքը պետք է ներկայացված լինի որպես շահագրգիռ կողմ:

Հաշվի առնելով, որ իրավապահ գործունեության և արդարադատության հարցերում համարժեք մասնակցությունը անհրաժեշտ պայման է, պետք է պայմաններ ստեղծվեն, որպեսզի ադրբեջանցիները ձևավորեն տեղական անվտանգության ուժեր ու համապատասխան դերակատարում ունենան դատարաններում:

4.6. Սեփականության հարցեր

Հայաստանի կառավարությունը պատասխանատվություն է կրում նաև արևմտյան ադրբեջանցիների նկատմամբ կատարված իրավախախտումների, այդ թվում՝ սեփականության իրավունքի խախտման հետևանքների վերացման համար: Հայաստանի կառավարությունը պետք է ապահովի ադրբեջանցիներին պատկանող գույքի ու համայնքային հողերի վերադարձը, փոխհատուցում վճարի գույքային վնասի և այն կորուստների համար, որոնք պատճառվել են գույքի օգտագործման խոչընդոտման հետևանքով: Հայաստանի կառավարությունը պետք է վճարի ադրբեջանցիների սեփականության իրավունքների վերականգնման հետ կապված բոլոր ծախսերն ու ձեռնարկի անհրաժեշտ այլ միջոցներ:

4.7. Վերաինտեգրում ու վերականգնում

Վերադարձից հետո առաջին շրջանում հայրենադարձված ադրբեջանցիները հումանիտար օգնության կարիք կունենան, իսկ այնուհետև՝ վերաինտեգրման, վերականգնման ու երկարաժամկետ սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված աջակցության ծրագրերի կարիք: Համայնքը տրամադրված է դառնալ միջազգային կազմակերպությունների և դոնորների հիմնական գործընկերը՝ այս ոլորտում համապատասխան ծրագրերի իրականացման համար:

Բնակավայրերում սոցիալական կապերն ու դինամիկան կարևոր նշանակություն ունեն վերաինտեգրման ու վերականգնման միջոցառումների հաջողությունն ապահովելու համար: Ինչպես ցույց է տալիս փորձը՝ մինչև արտաքսումը եղած բնակավայրի կոնֆիգուրացիայի պահպանումը նպաստում է սոցիալական կապերի վերականգնմանը և այդպիսով հեշտացնում վերաինտեգրումն ու վերականգնումը: Այս առումով, լինելով մարդու իրավունքների պահանջ, բնակավայրի՝ մինչև արտաքսումը ունեցած կառուցվածքի պահպանումը վերաինտեգրման ու վերականգնման հաջողության անհրաժեշտ պայմանն է:

4.8. Մշակութային ժառանգության վերականգնումը և պաշտպանությունը

Համայնքը ջանքեր կգործադրի, որպեսզի Միավորված Ազգերի Կազմակերպության մասնագիտացված գերատեսչությունների մասնակցությամբ հասնի Հայաստանում ադրբեջանցիներին պատկանող մշակութային ժառանգության վիճակի գնահատմանը, ներառյալ մշակութային ժառանգության քանդված ու ոչնչացված նմուշների ցուցակի կազմումն, ու ապահովի Հայաստանի կառավարության կողմից դրանց վերականգնման ու պահպանման պարտավորության կատարումը:անվերապահորեն կատարի:

4.9. Հաշտեցում էթնիկ համայնքների միջև

Արևմտյան ադրբեջանցիների նկատմամբ մեծ անարդարություն է իրականացվել: Այս անարդարությունը չի սահմանափակվում միայն էթնիկ զտումներով: Այլ վայրերից մարդիկ վերաբնակեցվել են արևմտյան ադրբեջանցիների տներում: Պահպանելով այս ցավալի անցյալը սեփական պատմական հիշողության մեջ՝ Համայնքն ընդունում է, որ խաղաղության և զարգացման ապահովումը հնարավոր է միայն հաշտեցման միջոցով: Արևմտյան ադրբեջանցիները պատրաստ են խաղաղ, կողք-կողքի ապրել այն հայերի հետ, ովքեր այլ երկրներից վերաբնակեցվել են իրենց հայրենիքում: Համայնքն ակնկալում է, որ հաշտեցման հասնելը երկար ժամանակ կպահանջի ու բարդ կլինի: Համայնքը մարդու իրավունքների հարգումը, իրավունքի գերակայությունն ու երկակի ստանդարտների վերացումը դիտարկում է որպես խաղաղության հասնելու կարևոր գործիքներ: Այս կապակցությամբ Համայնքը ջանքեր կգործադրի՝ դադարեցնելու Հայաստանի այն քաղաքականությունն ու գործելակերպը, որոնք ատելություն ու խտրականություն են սերմանում ադրբեջանցիների նկատմամբ, դատարանին հանձնելու ադրբեջանցիների դեմ հանցագործություններ կատարած անձանց, անհապաղ դադարեցնելու նրանց փառաբանումը, քանդելու ադրբեջանցիների դեմ հանցագործություններին մասնակցած ռազմական և քաղաքական գործիչների, ահաբեկիչների հուշարձաններն ու չեղարկելու աշխարհագրական անվանումների փոփոխությունները:

4.10. Համայնքի երկարաժամկետ գործունեությունը

Համայնքը կարծում է, որ իր առաքելությունը չի սահմանափակվում միայն վերադարձի հարցով: Բնակչության՝ հայրենիք վերադառնալուց հետո Համայնքը կշարունակի իր գործունեությունը որպես կազմակերպություն, այդ թվում՝ մտադիր է շարունակել համախմբված ջանքերն ադրբեջանցիների շահերի, իրավունքների, զարգացման ու անվտանգության ապահովման ուղղությամբ, և այդ նպատակով կշարունակի երկխոսությունն ու փոխգործակցությունը Ադրբեջանի Հանրապետության, օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի կառավարության և հասարակայնության հետ:

5. Եզրափակիչ դրույթներ

Համայնքը հանդես կգա նախաձեռնողականությամբ ու պատասխանատվություն կստանձնի սույն Հայեցակարգի իրականացման համար՝ ջանքեր գործադրելով իրավական շրջանակներում այդ նպատակով ռեսուրսներ ձեռք բերելու համար: Համայնքը կարող է փոփոխել Հայեցակարգը՝ կախված իրավիճակի հնարավոր փոփոխություններից: